



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2025թ. հոկտեմբերի 23-ին, N 355-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ՀՐԱԶԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՍԻՓԱՆԻ Ֆ. ՈՒՍԸՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Ռուզաննա Սարգսյանի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ռուզաննա Սարգսյանին 2025 թվականի հոկտեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սիփանի Ֆ. Ուսըվի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար երեք ամիս ժամկետով՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Սիփանի Ֆ. Ուսըվի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռուզաննա Սարգսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 10/24/2025 10:30:54 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457



Մ. ԱՐԱՍԻՅԱՆ